Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչի (13 դասաժամ) թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021 թ. մարտի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 5-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի N4 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Սևան, Չարենցի 4:

Տեղեկությունների համար զանգահարել (0261) 2-41-22 հեռախոսահամարով:

Սևանի N4 հ/դ տնօրեն Սվ. Մաթևոսյան